«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սովորողների մոտ արժեքային համակարգի որոշ տարրերի ձևավորումը «Վանի թագավորության մշակույթը» ենթաթեմայի ուսուցման գործընթացում:

Առարկա՝ Պատմություն

Կատարող՝ Արմինե Մկրտչյան

Մարզ՝ Լոռի

Ուսումնական հաստատություն՝ Լեջանի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Մ. Գ. դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Արմեն Միշայի Ծատուրյան

Բովանդակություն

Ներածություն……3

1.Նյութական մշակույթը արժեքային համակարգում……5

2.Հոգևոր մշակույթը արժեքային համակարգում……15

Եզրակացություն……..21

Օգտագործված գրականության ցանկ……..22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Սույն բաղադրիչով նախատեսված համակարգը արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների,վերաբերմունքի և վարքի միջոցով:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: կյանքի առաջընթացը պայմանավորված է Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ

ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: [1,65]

Պատմություն առարկան թույլ է տալիս սովորողների մոտ ձևավորել արժեհամակարգ ինչպես ամբողջ դասընթացի,այնպես էլ առանձին թեմաներ ,ենթաթեմաներ անցնելիս: Այսպես, Վանի թագավորության մշակույթ ենթաթեման անցնելիս, իմ նպատակն է սովորողների մոտ ձևավորել արժեքային համակարգի որոշ տարրեր. Հայոց պատմության հանրակրթական առարկայի գլխավոր նպատակը պատմական գիտելիքներով զինված, ազգային ինքնագիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, ազգային նկարագիր ունեցող հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է: Այս առաջնահերթ նպատակից բխում են հետևյալ հիմնական խնդիրները.

-սովորողին հաղորդակից դարձնել նախորդ սերունդների ստեղծված հոգևոր մշակութային արժեքներին,

- ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ,

- ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում,

- օգնել հասկանալու պատմական իրադարձությունները, երևույթները և դասեր քաղել պատմությունից,

- ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ, ինչը կնպաստի պատմական ժառանգականության ընկալմանը և պատմական փորձի յուրացմանը ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցմանը,

- ամբողջացնել և համակարգել հայագիտական առարկաներից սովորողների ստացած գիտելիքները:[2,5]

Իմ առջև դրված խնդիրն է ձևավորել անձ և քաղաքացի,որը պետք է գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի ավանդույթների, ազգայինայլ արժեքների կարևորությունը և նշանակությունը և լինի դրանց կրողը: Սովորելով ցանկացած թեմա,որը վերաբերում է մշակույթին ,աշակերտը պետք է կայուն գիտելիք ունենա և գիտակցի իր ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը: Ենթաթեման անցնելիս հանձնարարում եմ աշակերտներին ինքնուրույն ծանոթանալ համացանցից թեմային վերաբերող նյութին,ապա դասարանում խմբային աշխատանքի միջոցով,օգտագործելով նաև դասագրքի նյորթը, ներկայացնում են Վանի թագավորության մշակույթը:1-ին խումբը ներկայացնում է Վանի թագավորության նյութական մշակույթը,2-րդ խումբը՝հոգևոր մշակույթը:Ապա ամփոփում ենք գնահատելով Վանի թագավորության մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթի մեջ:Այլ տարբերակով ,կախված աշակերտների առանձնահատկություններից, սահիկահանդեսի միջոցով ներկայացնում եմՎանի թագավորության մշակույթը,ապա հարցադրումների միջոցով ամփոփում եմ ստացած գիտելիքները, տպավորությունները, արձագանքները ենթաթեմայի շուրջ:

Այսպես, ստորև ներկայացնենք Վանի թագավորության հոգևոր և նյութական մշակույթը:

1.Նյութական մշակույթը արժեքային համակարգում

Վանի թագավորության մշակույթը ձևավորվել և զարգազել է Հայկական լեռնաշխարհի բրոնզի դարաշրջանի մշակույթի բազմադարյան ավանդների հիմքի վրա՝ կազմելով նրա պատմական բնականոն զարգացման նոր փուլը: Հզոր պետականության ստեղծումը, սակայն, վարչատնտեսական, ռազմական և գաղափարախոսական նոր և մասշտաբային խնդիրներ է դրել ճարտարապետության, արվեստի և ընդհանրապես, մշակույթի առջև: Ուրարտուի անցյալը գիտական աշխարհին հայտնի դարձավ 19-րդ դարի կեսերին՝ շնորհիվ հայկական լեռնաշխարհի տարածքում հայտնաբերված սեպագիր արձանագրությունների :Այդ արձանագրությունները հայտնի են դեռևս վաղ միջնադարում, սակայն գիտակցված չէին որպես պատմական աղբյուր: Եվ միայն 19-20-րդ դարերի սահմանին, նրանց վերջնական վերծանումից հետո, վեր հանվեց Հայաստանի պատմության լիովին նոր մի էջ: Հնագիտորեն ուրարտական մշակույթը սկսեց ուսումնասիրվել ավելի ուշ 19-րդ դարի վերջին և 20-րդ առաջին կեսին փոքրաածավալ հետախուզական ուսումանսիրությունները վերածվեցին ավելի մանրամասն և լայնածավալ հնագիտական պեղումների միայն 19-րդ դարի երկրորդ կեսից, երբ Հայաստանի Հանրապետությունում, Թուրքիայում և հյուսիս-արևմտյան Իրանում հայ-ռուսական, թուրքական և անգլո-ամերիկյան արշավախմբերը մեկը մյուսի հետևից վերհանեցին

հուշարձանները, որոնց հիման վրա այսօր բավականին ընդհանուր պատկեր է ստեղծվել ուրարտական մշակույթի վերաբերյալ։

Ճարտարապետություն. Ուրարտուում զարգացման բարձր աստիճանի վրա էր գտնվում ճարտարապետությունը և շինարարական տեխնիկան:Ուրարտացիները կառուցել են քաղաքներ, ամրոցներ,պալատներ, տաճարներ բնակելի շենքեր, ջրանցքներ , արհեստական լճեր և այլ շինություններ, որոնց ավերակները ցրված են պատմական Հայաստանի ամբողջ տերիտորիայում։ Ուրարտական ճարտարապետական հուշարձաններից համեմատաբար լավ են ուսումնասիրված Էրեբունի և Թեյշեբաինի քաղաքների միջնաբերդերը։ Էրեբունիի եռանկյունաձև միջնաբերդերը շրջապատված է եղել բազալտե հիմքի վրա հում աղյուսով շարված, 3 մետր լայնություն և մոտ 15-20 մետր բարձրություն ունեցող ատամնա վոր հզոր պարսպով։ Պեղումների միջոցով միջնաբերդում հայտնաբերվել են Արգիշտի Ա-ի կառուցած պալատական համալիրը իր աշխարհիկ և պաշտամունքային շենքերով, ցորենի մի խոշոր պահեստ, գինու մառան և բնակելի թաղամասի հետքեր ։ Հայտնաբերված բոլոր շենքերը միհարկանի են հում աղյուսով շարված առանց պատուհանների, երթիկով:Ճարտարապետական արվեստի արժեքավոր և հետաքրքիր կոթողնեև են պալատական սյունազարդ, հանդիսավոր ընդունելության հոյակապ դահլիճը, Խալդ աստծուն նվիրված տաճարը որոնց պատերը գեղազարդված են որսի ,կենաց ծառերի ռազմական և կրոնական երթերի խմբային հիանալի որմնանկարներով։ Արարատյան դաշտավայրի կամ ուրարտական <<Ազա երկիր>> փոխարքայության առաջին խոշոր ռազմա-ստրատեգիական և քաղաքական կենտրոնը դարձավ ներկայիս Երևանի հարավ-արևելյան մասում հիմնադրված մեծ քաղաքը՝ Արին-բերդ բլրի կատարին վեր խոյացող հսկայանկան ամրոցով։

1952 թվականին պեղումների ժամանակ Արին-բերդի փլատակների մերին շերտում հայտնաբերվեց 13 տողանոց սեպագիր արձանագրություն, որը փորագրված էր սրբատաշ բազալտի վրա՝ Արգիշտի Ա թագավորի նաունից։ Այդ կարևոր վավերագիրը հավաստում է որ Արին-բերդ բլրի վրա և նրա շրջակայքում Մենույաի որդի Արգիշտի թագավորը, Խալդի աստծո զորությամբ, Էրեբունի անունով հոյակապ քաղաք-ամրոց կառուցեց, ի զորություն Բիայնիլի երկրի և ի սարսափ թշնամու երկրների... [3,354] Քաղաքանվան ընթերցումը վերջնականապես ճտվեց 1952-1953 թվականներին, երբ Կարմիր բլուրի պեղումներով հայտնաբերված բորնզե դեկորատիվ վահանների նվիրատվական արձանագրություններից հայտնի դարձավ Էրեբունի ընթերցումը։ Էրեբունի-Երևանի հիմնադրման տարեթիվը պետք է համարել Ք.ա. 782 թվականը տեղադրված են պատերի վերին մասում,հենց ծածկի տակ։



Ուրարտուի թագավոր Արգիշտի Ա-ի կողմից կառուցված Էրեբունի ամրոցի մասին կառուցման արձանագրություն [4]

Քաղաքային շինությունների քանակությամբ Ք.ա. 7-րդ դարի ուրարտական Ռուսա Բ թագավորը կառուցումէ Թեյշեբաինի քաղաքը, կառուցված է Կարմիր բլուրի վրա և տարածվում է հզոր միջնաբերդից դեպի արևմուտք և հարավ ,նա ուներ ճիշտ հատակագծով փողոցներ, որոնք համապատասխանում են թաղամասերի և պարունակում բնակելի շենքերի տակ զանազանատիպ կոմպլեքսներ:Թեյշեբաինի քաղաքի բերդը զբաղեցնում է մոտ 4 հեկտար տարածություն և կազմված է շուրջ 150 սենյակից: Բլուրի զառիթափ լանջերին հարող շինության հյուսիսային և արևելյան ճակատներն անկանոն դասավորություն ունեին ,աստիճանաձև են ,որը համապատասխանում էր Կարմիր բլուրի մակերևույթին:Արևմտյան ճակատը բացվում էր բերդապարիսպով շրջապատված ընդարձակ բակի վրա,որ երկու մուտք ուներ,մեկը հարավային կողմից,մյուսը՝ հյուսիս-արևմտյան:Գլխավորը դրանցից առաջինն էր՝երկու աշտարակներով և ներսի շինությամբ լավ ամրացված, իսկ երկրորդը մի փոքր դարպաս էր ,որի միջոցով սայլը կամ մարտակառքը կարող էր ազատ անցնել, իսկ անցորդների համար արված էր մի նեղ դռնակ :Գլխավոր մուտքը սալահատակված էր անկանոն ձևի հսկայական քարե սալերով,իսկ երկրորդը՝գետաքարերով:Միջնաբերդի պարիսպները շարված էին չթրծված խոշոր աղյուսներից:Արտաքին պարսպի հաստությունը հասնում էր 3,5 մետրի ,իսկ ներքին պատերինը 2,1 մետրի: Միջնաբերդի անկյուններում վեր են խոյանում վիթխարի աշտարակներ:Տարբեր մասերում պարիսպների բարձրությունը տարբեր էր՝ 6-ից մինչև 12 մետրի,քանի որ բլրի ռելյեֆի պատճառով ամբողջ շինությունը աստիճանաձև տեսք ունի: Լուսամուտները հավանաբար , բազմազանությամ և

ճարտարապետական բարեմասնություններով, թաղամասերի և հրապարակների ընդարձակ տարածություններով, երկար և ուղղաձիգ փողոցներով [3,400]

Առանձնապես աչքի է ընկնում Արգիշտիխինիլի քաղաքը:Այն հիմնադրվել է Ք.ա. 776 թվականին ուրարտական Արգիշտի Ա թագավորի կողմից և այնուհետև շուրջ 200 տարի կառուցապատվել, ընդարցակվել է ու բարեկարգվել նրա հաջորդների եռանդուն շինարարական գործունեությանշնորհիվ: Արգիշտիխինիլին հանդիսացել է տնտեսական, մշակութային և կրոնական կենտրոն:

Վանի թագավորությունում կային թագավորանիստ,վարչատնտեսական, ռազմական, ինչպես նաև պաշտանմունքային նշանակության քաղաքներ:Թագավորանիստ քաղաքների թվին էին պատկանում Արզաշկուն, Տուշպան, Ռուսախինիլին:Քաղաքները իրենց միջնաբերդի շուրջն ունեին մի միսանական տնտեսական միավորում կազմող բազմատիվ բնակատեղիներ: Ուրարտական վարչատնտեսական խոշոր կենտրոններն էին Արգիշտիխինիլին, Թեյշեյբանինին, Օշականը,Արամուսը և այլն:

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են պաշտանմունքային կառույցներ տաճարներ, որոնք կառուցված են եղել զանազան աստվածությունների պատվին: Ուրարտուի եզակի պաշտանմունքային կառույց է Մուսասիրի տաճարը (Արդինիի), որի արտաքին տեսքի մասին կարող ենք պատկերացում կազմել Սարգոնի պալատի բարձրաքանդակի վրա եղած պատկերից՝ ասորեստանցիների կողմից Մուսասիրի Խալդի աստծո տաճարի կողոպտման տեսարանից:Դժվար է որոշել Մուսասիրի տաճարի կառուցման ժամանակը, բայց <<Լուվրի աղյուսակի>> այս տեղեկուցյունից որ տաճարում եղել է Իշպուինիի որդու՝ Սարդուրիի արձանը, կարելի է եզրակացնել որ 9-րդ դարի վերջին կամ 8-րդ դարի սկզբին տաճարը արդեն գոյություն ուներ:Հավանական է, որ այն կառուցվել է ուրարտական թագավոր Մենուայի կողմից, որը Մուսասիրը միացրեց իր թագավորությանը:

Տաճարը կառուցված է բարձրադիր հարթակի վրա: Դեպի հարթակը աստիճաններ էին արված, որոնք բարձրաքանդակի վրա, հավանաբար ներկված էին եղել ու այդ պատճառով չեն պահպանվել:Տաճարն ունեցել է նիզակով ավարտվող բարձր ճակտոնով երկթեք տանիք:Տաճարի մուտքի ոչ բարձր դուռը տեղավորված է եղել ճակատի կենտրոնում:Մուտքի երկու կողմերում կանգնեցված էին եղել երկու մեծ նիզակ ու աղոթողի դիրքում երկու արձան:Տաճարաի ճակատը զարդարել են խոյակներ ու խարիսխներ չունեցող, բայց լայնացող վերնամասով վեց սյուներ կամ որմնամույթեր:Տաճարի ճակատային պատին երևում են ուռուցիկ միջնամաս ունեցող կլոր վահաններ որոնք տեղադրված են ինչպես սյուների, այնպես էլ նրանց արանքում եղած պատամասերի վրա: Լեման-Հաուպտը Մուսասիրի տաճարը իրավացիորեն կապում էր Պաֆլագոնիայի հուշարձանների հետ, իսկ Հերցֆելդը նշում է, որ տաճարի

երկրաչափական նախշազարդերով տաճարը հիշեցնում է փռյուգիական նմուշներ: [3, 402]

Խալդի աստծուն նվիրված տաճարը Մուսասիրում (վերակազմություն) [5]

Ուրարտական ճարտարապետական հուշարձանները զարդարվում էին կամ ճարտարապետության հետ օրգանական կապ չունեցող մետաղյա իրերով,կամ քարի բազմագույն ագուցումներով:

Ուրարտական ճարտարապետության մեջ գույնի հարցը մեծ նշանակություն է ունեցել: Այսպես Թոփրախ-Կալեի տաճարը կառուցված է եղել բազմագույն քարերից: Արին-բերդում և Կարմիր-բլուրում կատարված պեղումները վկայում են, որ ուրարտական ճարտարապետության մեջ լայն տարածում է ունեցել պատերի նախշազարդումը: Արին-բերդի ավերված շինություններից մեկի պատերի սպիտակ ֆոնի վրա 1950 թվականի հետախուզական պեղումների ժամանակ հիմնականում կապույտ և կարմիր ներկով արված հիանալի որմնազարդի մնացորդներ են հայտնաբերվել:Պեղումները թույլ տվեցին վերականգնել նախշազարդային տարրերի հաջորդականությունը :Պատի վերին մասում դուրս ցցված քիվի վրա տեղադրված էին շրջաններ,որոնց մեջ ներգծված էին բազմաթև աստղեր:Դրանից ներքև անցնում էր բնորոշ ասորեստանյան տիպի արմավազարդերի շարքը՝կապույտ և կարմիր գույների հաջորդականությամբ, իսկ դրա տակ աստիճանաձև փոքր աշտարակների շարքով լցված մի շերտ,որը նույնպես տարածված է ասորեստանյան որմնանկարներում: Նախշազարդ այս երեք շարքի տակ անցնում էր ցլիկների ու խոյերի պատկերներով նկարազարդված ոչ լայն ֆրիզը,իսկ ավելի ներքև՝սրբազան ծառերն ու նրանց կողքին կանգնած աստվածներին պատկանող նկարներ:Այդ գոտուց ներքև տեղավորված էին աստվածների ավելի խոշոր պատկերներ:Օրինակ,1952 թվականին հայտնաբերված առյուծի վրա կանգնած աստծո պատկերը:Էրեբունի

քաղաքի միջնաբերդի շինություններից մեկում հայտնաբերվել են որմնանկարներ,որոնք հին արևելյան արվեստի հրաշալիքներ են:

Էրեբունի ամրոցի որմնանկար (Մ. թ. ա. 8- րդ դար) [6]

Այս որմնանկարների մեջ հանդես են գալիս ուրարտական ռազմիկները՝գույնզգույն հագուստներով, հանդերձանքի և զինավառության հետաքրքիր մանրամասներով:

Այստեղ ,թագավորական որսի շքեղ տեսարաններում ներկա են նաև Բիայնիլի-Ուրարտուի ճաճանչափայլ թագավորը՝մարտակառքի վրա,նետաձգության պատրաստ վիճակում, ինչպես և նրան շրջապատող տոհմիկները, հետևազորն ու այրուձին: Սրանք բոլորը որսի շներով հետապնդում են խուճապահար հրեզեն նժույգներին,վայրի ցուլերին,առյուծներին և ընձառյուծներին:

Հայկական բարձրավանդակում գրեթե ամեն քայլափոխի կարելի է հանդիպել հին քարտաշների հրաշալի աշխատանքի հետքերին: Ժայռերի վրա հարթեցված հսկայական մակերեսները, հարթակները, սանդուղքները, բուսականության համար արվող աստիճանաձև տարածությունները և երեբեմն մեկ մետր բարձրությոն հասնող աստիճանները վկայում են որ քարի վրա կատարվող աշխատանքը ուրարտացիների մոտ շատ տարածված էր:

Ժայռերի մեջ փորագրված խորշերն ու շինությունները տարբեր նշանակություն ունեին:Դրանց մեջ հատկապես առանձնանում էին պաշտանմունքային նշանակություն ունեցողները, այդ թվում այնպիսի խորշերը, որոնց ներքին մակերևույթին փորագրվում էին կրոնական կամ ռազմական բովանդակություն ունեցող սեպագիր արձանագրությունները:Ուրարտացիները այդ ժայռախորշերտ կոչում են <<Խալդիի դռներ>>: Դրանք մեծ չափեր էին ունենում: Այսպես, այժմ

«Միերի դուռ» կոչվող նշանավոր ժայռախորշը,որ կրում է Իշպուինիի և Մենուայի կրոնական արձանագրությունը, հասնում էր 5.18 մետր բարձրության: Դեպի խորշը աստիճան էր տանում, իսկ ժայռի ստորոտում կառուցվաք էր ստորգետնյա պաշտանմունքային մի շինություն [3, 404]:

Վանի ժայռախորշում տեղադրված են Արգիշտիի որդի Սարդուրիի տարեգրությունը կրող քարե կոթողները, որոնք իրենց չափով շատ պատկառազդու են: Ժայռի մշակման հետ կապված ուրարտական հուշարձանների մեջ հատուկ ճանաչում են ստացել Վանի ժայռի մեջ փորված արհեստական անձավները և ընթարձակ շինությունները:Այդ անձավի նշանակության վերաբերյալ մինչև այժմ դեռևս միասնական կարծիք չկա:

Մովսես Խորենացին, նկարագրելոբ Վանում «Շամիրամի կառուցած» շինությունը, պատմում է որ կարծր ժայռի մեջ փորել են զանազան պալատներ, սենյակներ, գանձապահոցներ:Պարզվում է, որ Վանի ժայռի խորշերի ու անձավների մեջ կան ոչ միայն կրոնա-պաշտանմունքային <<դռներ>> այլև թաղումային շինություններ: Ջրանցքաշինությունը գտնվում էր կենտրոնական իշխանության հսկողության ներքո: Այս իմաստով հատկապսե հայտնի են Մենուա և Ռուսա արքաների ջրանցքները, որոնք Հին աշխարհի բացառիկ կոթողներից են: Վանի թագավորության շինարվեստը հետագայում մեծ ազդեցություն ունեցավ փոքրասիական և հատկապես իրանական (աքեմենյան) կառուցողական ավանդությունների վրա:

Մետաղագործություն: Ոսկին,արծաթը, բրոնզը, երկաթը ուրարտական մետաղաձուլության նյութերն են կազմում:Այստեղ էլ նշանակալի է այն բարձր զարգացումը,որին հասել էր արվեստը:Բրոնզի առկայության պայմաններում, Ուրարտուում ավելի վաղ, քան այլ երկրներում երևան եկավ ու լայն կիրառություն գտավ երկաթը:Պնդում են, որ ուրարտական մշակույթի առանձնահատկությունը մետաղագործության բարձր զարգացումն է և նրա մոտիկությունը խեթերի ու խուրրիների ավանդույթներին:Նրանց կարծիքով ուրարտական մետաղյա իրերը արտահանվել են հյուսիսային Կովկաս,Սիրիա և Միջագետք, ինչպես նաև Մարաստան, Իրան և Առաջավոր Ասիայի արևմտյան մարզերը,ընդհուպ մինչև Էգեյան ծով:

Թոփրախ-Կալեի,Կարմիր բլուրի,Արգիշտիխինիլիի, Ալթըն թեփեի,Կայալը-դերեի պեղումների ժամանակ ավելի շատ մետաղե գործիքներ ու զենքերեն հայտնաբերվել

,քան Առաջավոր Ասիայի այլ տեղավայրերից: Դրանցից առանձնապես բնորոշ են երկաթե խոփերը, բրիչի ծայրերը, մանգաղները, եղանները, կացինները ու մուրճերը, կեռիկները, նիզակի ծայրերը, դանակները ու բազմազան այլ մանր իրեր: Կարմիր բլուրում մեծ քանակությամբ երկաթե իրերի հետ գտնվել են հազարավոր բրոնզե առարկաներ: Ուրարտական մետաղագործությունն ապահովված էր տեղական հումքով: Հատկապես հարուստ են ներկայացված ուրարտական սպառազինության առարկաները: Այդ մասին առանձնապես արժեքավոր տեղեկություններ է պարունակում <<Լուվրի աղյուսակը>>՝Սարգոնի Ք.ա 714 թվականի արշավանքի նկարագրությունը ,որ պատմում է Մուսասիրի գրավման մասին:Այստեղ Խալդի աստծու տաճարում ասորեստանցիները հափշտակում են բազմաթիվ բրոնզե իրեր. 25122 ծանր ու թեթև վահան,1514 ծանր ու թեթև նիզակ, 30412 ծանր ու թեթև սուր, 607 ծանր ու քեթև անոթ և, բացի այդ, բրոնզե աղեղներ ու հեծելադրոշներ:[3,378] Կարմիր-բլում հայտնաբերված Արգիշտի Ա և Սարդուրի Բ թագավորների ձոնական արձանագրություններ սաղավարտներից ու կապարճներից շատերը ուրարտական արվեստի նշանավոր հուշարձաններ են:

Ուրարտական բրոնզագործության բարձրարվեստ իրերը աչքի են ընկնում ոչ միայն իրենց գեղեցկությամբ ու որակով , այլև պատրաստման տեխնիկայով:Յուրաքանչյուր առարկային հատուկ են այնպիսի գծեր, որոնք նրան պատկերում են համանման,առաջին հայացքից նույնատիպ առարկայից:Պարզ է դառնում,որ դրանք բրոնզից ձուլված են մոմե մոդելների միջոցով: Ուրարտական մետաղյա առարկաների մեջ հատուկ խումբ են կազմում կաթսաների բրոնզե բռնակները, որոնք մարդկային , մեծ մասամբ՝կանացի իրանով թռչուններ են:Հնարավոր է ,որ դրանք արևի աստվածության պատկերներ լինեն: Բրոնզի խոշոր անոթների գոյությունը վկայված էՍարգոնի Ք.ա 714 թվականի արշավանքի նկարագրության մեջ:

Թոփրախ-Կալեում գտնված մետաղե իրերից հարկ է հիշատակել ներքևի մասում գդալաձև զարդերով բրոնզե թաս, որը մտնում է հին արևելյան ու անտիկ մետաղե անոթների այն խմբի մեջ, որոնք հայտնի են փիալա անունով: Կարմիր-բլուրում հայտնաբերվել են ամենաբազմազան ձևերի մի քանի փիալաներ: Մեզ են հասել ուրարտական ժամանակաշրջանի մեծ քանակությամբ բրոնզե պարզ իրեր՝ապարանջաններ,ճարմանդներ, դաշույններ,աղեղի ծայրեր և այլն: Մեզ հայտնի ուրարտական ոսկե իրերը քանակով շատ քիչ են:Թոփրախ-կալեի պեղումների ժամանակ գտնվել է միայն մի մեդալյոն, որն իրենից ներկայացնում է մեկ միլիմետր հաստությամբ և 6,5 սմ տրամագծով թերթավոր ոսկու սկավառակ: Մեդալյոնի վրայի պատկերները կատարված են մետաղապլաստիկ եղանակով.դրանք սեղմվել են հակառակ կողմից,որից հետո լրացուցիչ մշակման են ենթարկվել կտրիչով:Մեդալյոնի վրա պատկերված է գահին նստած կին՝ձախ ձեռքին մի ճյուղ և նրա առաջ կանգնած է երկրորդ կինը՝ նույնանման հագուստներով:

Ոսկե մեդալյոնի վրա պատկերված կանացի նստած կերպարանքը անվերապահորեն նման է Հայաստանի պատմական թանգարանում պահվող բրոնզի արձանին .այստեղ ևս կինը , հավանաբար աստվածուհի, նստած է ճիշտ նույն տիպի հագուստով և նույն դիրքով: Ոսկերչական հմտալի և նուրբ աշխատանքի արգասիք են Կարմիր-բլուրում հայտնաբերված ոսկե ականջօղերը, ոսկե ապարանջանը, որի երկու ծայրերը առյուծի գլխի տեսք ունեն :

Առանձին ոսկե առարկաներ հայտնաբերվել են նաև Կարմիր բլուրի պեղումներից: <<Լուվրի աղյուսակը >> վկայում է Մուսասիրում՝ Ուրզունա թագավորի պալատում եղած ոսկու մեծ քանակության մասին: Մուսասիրի տաճարում ոսկե իրերն էլ ավելի շատ էին:

Սարգոն 2-րդի տեքստերում հիշատակվում է , ու նրա զորքերը Մուսասիրում գրավել են 2 տոննա ոսկի, 5 տոննա արծաթ և ավելի քան 100 տոննա պղնձե , երկաթե իրեր : Ուրարտացիները տեխնիկական մեծ հմտության էին հասել նաև արծաթից առարկաներ պատրաստելու գործում: Մուսասիրի տաճարում պահվում էին մեծ քանակությամբ արծաթե առարկաներ : Մետաղամշակումը լայն կիռարում ուներ նաև զենքի և զինամթերքի արտադրության ասպարեզում :Հարձակողական և պաշտպանական զենքը կազմված էր տարբեր ձևերի նիզակներից ,դաշույներից ,թրերից, կացիններից , գուրզերից:Գտնվել են ոսկուց և արծաթից օրինակներ: Վանի թագավորության բանակի զինվորների զրահը և հանդերձանքը կազմված ե եղել մի քանի տեսակներից:Դասելով Բալավաթյան դարպասերի վրա եղած պատկերներից՝ Արամու թագավորի զինվորները հանդես են գալիս երկար , մինչև ծնկները հասնող գոտեկապ վերնաշապիկներով, գլխներին կատարավոր սաղավարտներով, փոքրիկ վահաններով, զինված են կարճ թրերով և նետ ու աղեղով: Այս նկարագրությունից պարզորեն նկատվում է, որ այնտեղ պատկերված են թեթև հետևակի մարտիկները: Ծանր հետևակի սպառազինությունը կազմված էր նաև տարբեր տիպի զրահաշապիկներից, խոշոր մարտական վահաններից և բրոնզե գոտիներից: Վերջիններս նախշազարդ են, և բազմաթիվ նմուշներ պահվում են Մյունխենի, Նյու Յորքի թանգարաններում: Արվեստի բարձրարժեք հուշարձաններն են նաև գեղազարդված վահանները, սաղավարտները, կապարճները, գոտիները, ամանները և այլն: Կարմիր-բլուրում գտնված Արգիշտի 1-ի սաղավարտը գեղազարդված սրբազան ծառերի, նարնց երկու կորդմերը կանգնած աստվածների, ռազմակառքերի, իսկ Սարդու 2-ի վահանը՝ առյուծների ու ցլերի հոյակապ քանդակներով: Սրընթաց արշավող հեծյալ մարտիկների, ռազմակառքերի ու կառավարների նունպիսի հիանալի քանդակներով են գեղազարդված նաև Արգիշտի 1-ի և Սարդուրի 2-ի կապարճները: Խեցեգործություն:Բազմաթիվ են ու բազմազան ՈՒրարտուի խեցեգործական իրերը: Վանի թագավորության ինչպես կենտրոնական մասում, այնպես էլ ծայրամասերո կատարված պեղումները տվել են հսկայական քանակությամբանոթներ ու դրանց

բեկորներ:Կարմիր-բլուրից հայտնաբերվել են երկու պահեստներ ՝խեցեգործական իրերով:Դրանցից մեկում կար 1036 սափոր, իսկ մյուսում՝ մոտ 120 զանազան անոթներ:

Ուրարտական խեցեգործության բազմազանությունը ձեռք է բերվել ոչ միայն ձևերի ու չափերի հաշվին, այլև պատրաստման տեխնիկայի Հանդիպում են ձեռքով պատրաստված և երբեմն շատ վատ թրծված կոպիտ անոթներ:Դրանց մի մասը պատրաստված է նաև առանցք չունեցող ազատ պտտվող հենարանի վրա:ՈՒրարտական խեցեգործության ամենաբնորոշ խումբը ներկայացված է բրուտագործական դուրգի վրա պատրաստված բարձրորակ արտադրանքով: ՈՒրարտական խեցեգործության առարկաները գույնով ևս շատ բազմազան են :Հանդիպում են տարբեր երանգների դեղին, կարմիր ու սև իրեր:Անոթների գույնը պայմանավորված է ինչպես կավի բաղադրությամբ, այնպես էլ թրծման պայմանմերով: ՈՒրարտական խեցեղենի մեջ շատ են խոր և հարթ ամաններն ու բաժակները,լայն կամ նեղացող վզիկով կճուճները,կարասները,ունկով և առանց ունկի սափորները,ինչպես նաև յուրատեսակ ձևի անոթներ:Ուրարտական իրերից հատկապես հետաքրքիր են Թեյշեբաինիից և Արգիշտիխինիլիից գտնված բարձր ոտքերի վրա կանգնած թասերն ու թեյնիկի նման երկար ծորակով սափորները,որոնք ցույց են տալիս ուրարտական խեցեղենի ունեցած կապը առաջավոր ասիական խեղցեղենի հետ:

Վանի թագավորությունումլայն տարածում են ունեցել մեծ կարասները, որոնք օգտագործվել են ոչ միայն հեղուկների,այլև հացահատիկի պահպանության համար:Հացահատիկի համար նախատեսված կարասների հասակին միջանցիկ անցք է արված,որպեսզի հացահատիկը չխոնավանա:Կարասների նախշազարդերը խիստ բազմազան են :Կան ոլորված պարանի ձևի բարձրաքանդակ զարդեր կամ մեկը մյուսի վրա հենված եռանկյունիների գոտիներ:Հաճախ բարձրաքանդակի նախշը զուգակցվում է դրոշմված,քսված կամ փորագրված փայլին:

Կարաս, գտնվում է Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանում [7]

Քարե գտածոներ: Քարի մշակումը ՈՒրարտուում բարձր զարգացման էր հասել:Քարը լայնորեն օգտագրծվում էր կենցաղում:Գետաքարերից և տուֆից պատրաստվում էին ծակիչներ, քերիչներ և այլ գործիքներ:

Քարի փափուկ տեսակից պատրաստում էին տարբեր ձևերի և չափերի տաշտեր,պանիր քամելու խոշոր ձագարներ,խողովակներ և այլն:Քարը լայնորեն օգտագործվում էր մետաղաձուլման ժամանակ.պատրաստվում են տարբեր ձուլակաղապարներ և գործիքներ: Ավելի բարդ էր արվեստում քարի օգտագործումը. քարից պատրաստվում էին տարբեր քանդակներ:Առավել հետաքրքիր էին կնիքները,որոնց վրա պատկերված էին հարուստ տեսարաններ՝կենաց ծառեր, սայլեր և մարտակառքեր, թագավորներ և քրմեր, պալատական տեսարաններ,առյուծներ: Ոչ պակաս տարածում ունեն տարբեր ձևերի և չափերի քարե ուլունքները, որոնց գերակշռող մասը գերազանց հղկված են: Որմնանկարչություն:ՈՒրարտական ճարտարապետության մեջ գույնի հարցը մեծ նշանակություն է ունեցել:Օրինակ Թոփրախ-կալեի տաճարը կառուցված է եղել բազմագույն քարերից:Մովսես Խորենացին,հիշատակելով Շամիրամ թագուհու կողմից Վան քաղաքի կառուցման մասին առասպելը, խոսում է զանազան ներկերով ու բազմագույն քարերով զարդարված շքեղ շենքերի մասին:

Այս շրջանի որմնանկարչությանը բնորոշ է պաշտանմունքային, կրոնական և աշխարհիկ բնույթը:Դրանք զարդարել են տաճարների, պալատների և այլ շինությունների պատերը: Որմնանկարչությունը հիմնականում ներկայացված է Կարմիր-բլուրի, Արին-բերդի, Թոփրախ-կալեի նյութերով:

Փայտամշակումը և ոսկորի փորագրման արվեստը Վանի թագավորությունում նույնպես բարձր զարգացում ապրեցին:

Վանի թագավորության նյութական մշակույթի մասին բավականին գիտելիք ձեռք բերելուց հետո ,կարելի է կազմակերպել էքսկուրսիա դեպի Էրեբունի պատմա-մշակութային թանգարան,որի արդյունքում աշակերտների մոտ ավելի հստակ և պատկերավոր դիրքորքշում կձևավորվի ազգային մշակույթի և արժեքների նկատմամբ,որոնց միջոցով պահպանվում, վերարտադրվում և զարգանորմ է հայոց արժեհամակարգը:

2.Հոգևոր մշակույթը արժեքային համակարգում

Կրոնը և հավատալիները: Վանի թագավորության կրոնը ուսումնասիրելու համար կան երկու հիմնական աղբյուրներ՝ ուրարտական սեպագիր արձանագրությունները և պատկերազարդ հուշարձանները, որոնցում արտացոլված են ոչ միայն ուրարտական պաշտոնական կրոնը, այլև սեպագիր արձանագրություններում չհիշատակվող ժողովրդական հավատալիքները:

Սեպագիր արձանագրությունների հաղորդած տեղեկությունները սահմանափակ են. Դրանցում հայտնվում են աստվածների անունները, պատմվում է տաճարների կառուցման մասին և թվարկվում զոհաբերությունները:

Ուրարտական արձանագրությունների ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալս, որ ուրարտական գլխավոր աստվածը Խալդին էր, որը բացարձակորեն գերիշխող դիրք ուներ մնացած բոլոր աստվածների նկատմամբ: Խալդին Վանի թագավորության դիցարանի գլխավոր աստվածությունն է: Լինելով բուն Վանի թագավորության երևույթ, նա, ամենայն հավանականությամբ, սկզբում թագավորող տոհմի հովանավորողն է եղել, իսկ հետագայում, պետականության կազմավորմանը զուգահեռ, ստացել է համաբիայնական (համաուրարտական) նշանակություն[Բազմաթիվ արձանագրություններում Խալդիի անվան կողքին հիշատակվում են Թեյշեբա և Շիվինի աստվածներ անունները, որոնք Խալդիի հետ մասիսին առանձնանում են մյուս աստվածների շարքից և կազմում աստվածների գերագույն եռյակը: [8,220]

Ուրարտացիների կրոնական պատկերացումների մեջ Խալդի աստվածը ռազմիկի կերպարանք ուներ. նա օրհնում էր թագավորին արշավանքի մեկնելիս, օգնում նրան հաղթելուց հետո: Եվ պատահական չէ, որ Մուսասիրի տաճարում որոշակի արտահայտված էր նիզակի ու վահանի պաշտանմունքը:Նիզակով էր պսակավորված տաճարի ճակտոնը. նիզակներ էին տեղադրված մուտքի երկու կողմերում՝ մեծ դռնապանների արձանների կողքին, իսկ վահանները կախված էին ճակատի պատերին ու սյուներին և հենց տաճարն էլ կոչվում էր <<Վահանի տուն>> : <<Խալդիի դռներ>> հասկացության տակ ուրարտական արձանագրությունները նկատի էին ունենում ժայռախորշերը:Կրոնական հավատալիքների համաձայն այդ դռներից դուրս էր գալսի ժայռի մեջ գտնվող աստվածը: Խալդին Վանի թագավորության դիցարանի գլխավոր աստվածությունն է:

Խալդի աստծու կինը ոըրարտական պանթեոնի գլխավոր աստվածուհի Արուբանին կամ Ուարուբանի-Վարուբանին էր: Ուրարտական կրոնի ուսումնասիրության համար հատուկ նշանակություն ունի Վանի մոտ գտնվող ժայռախորշում, այսպես կոչված <<Միհերի դուռ>>, արված արձանագրությունը: 9-րդ դարի վերջին վերաբերող այդ արձանագրության մեջ թվարկվում են ուրարտական աստվածների անունները և յուրաքանչյուրին մատուցվող զոհերի քանակը:



«Միերի դուռը» - «աստծու դարպասները», Ռուսախինիլիի մոտակայքում:[9]

Կարմիր-բլուրի հնագիտական նյութերի մեջ պահվել է Թելշեբա աստծո արձանիկը: Դա երկար հագուստով և աստծու համար բնորոշ եղջերավոր գլխարկով մի անմորուս կերպարանք է. ձախ ձեռքում բռնած է մարտական կացին, իսկ աջում սկավառականման գուրզ:

Վանի թագավորության հողմի և անձրևի աստված Թեյշեբայի բրոնզե արձանիկը [10]

Թեյշեբա աստծու կինը Խուբա աստվածուհին է: Դիցուհու պատկերը հավանաբար պահպանվել է Էրմիտաժում պահվող Հայկաբերդից գտնված կնիքի վրա: Վանի թագավորության գլխավոր աստվածներից երրորդը արևի աստված Շիվինին էր, նրա խորհրդանշանն էր արևանման սկավառակը:Շիվինիի կինն էր համարվում Տուշպեան թևավոր պատկերով:

<<Միերի դռան>> տեքստում բերված աստվածների ցուցակում հանդիպում է ուրարտացիների լուսնի աստված Շերալդին, աստղի կամ Վեներա մոլորակի աստվածուհի Սարդին և Ծինույարդի աստվածուհին: Ուրարտացիները իրենց

աստվածներին սովորաբար պատկերում էին մարդկային կերպարանքով, սակայն որոշ դեպքերում կարելի է տեսնել նրանց սկզբնական արմատները՝ կենդանիների ու թռչունների առանձին հատկանիշները: Այսպես, աստվածների գլխարկը որպես պարտադիր հատկանիշ ունենում էր եղջյուրներ: Կարելի է ենթադրել, որ Թեյշեբա աստծու հետ կապված է եղել ցուլը, իսկ Խալդիի հետ՝ առյուծը: Մարդու, կենդանիների ու թռչունների հատկանիշներն իրենց մեջ զուգակցող աստվածություններից մի քանիսը արհեստականորեն ստեղծված կերպարներ էին որ կարևոր տեղ էին գրավել կրոնի մեջ: Այդպիսին են շեդու աստվածություններն՝ մարդկային դեմքով կամ իրանով թևավոր ցուլերն ու առյուծները, որոնք ուրարտու են անցել Ասորեստանից և սրբազան ծառը պարուրող թևավոր ոգիները:

Միերի դռան ցուցակից դուրս, Էրեբունիի և Թեյշեբաինի արձանագրություններում հանդիպում ենք նաև Իուարշա անունով աստծուն, որը հավանաբար եղել է ռազմիկների աստվածը: Բացի հիշատակված աստվածների անուններից, կարելի է տեսնել մի խումբ աստվածությունների,որոնք արտացոլում էին հին տոտեմիստական պատկերացումները: Օրինակ ,ծառի պաշտամունքը: Վանի թագավորության կրոնը սերտորեն կապված է եղել Առաջավոր Ասիայի,նրան շրջապատող երկրների կրոնի հետ:

Լեզուն ու գիրը: Ուրարտերեն ու նրա ազգակից խուռիերեն լեզվով խոսող ժողովուրդները Ք.ա 2-1 հազարամյակներումլայնորեն տարածված էին Հայկական բարձրավանդակի վրա:

Ուրարտական լեզվի ուսումնասիրության համար հիմնական նյութ էին ծառայում ուրարտ ասորեստանյան աղբյուրներից, որտեղ զգալի թվով հատուկ անուններ են վկայված:Որոշակի օգնություն են ցույց տալիս խուռիերենի տվյալները: Մեզ հասել ավելի քան 1000 սեպագիր արձանագրություններ գրված քարի,մետաղի,ոսկրի, վերջապեսկավե սալիկների վրա:Ուրարտական վիմագիր արանագրությունները ծայրահեղորեն միանման են .մեծ մասամբ պարունակում են հաղորդումներ արշավանքների և հաղթանակների,տեղեկություններ շինարարական աշխատանքների մասին: Արձանագրությունների մի փոքր մասը պարունակում է կրոնական և պաշտամունքային բովանդակությամբ տեքստեր: Արձանագրությունները գրում էին ձախից աջ, առանց բառանջատման: Ուրարտուն ունեցել է հիերոգլիֆ գիրը, որը սահմանափակ տարածում ուներ և դուրս չէր գալիս նեղ տնտեսական ու պաշտանմունքային կարիքների սահմաններից հիերոգլիֆային կամ մեհենագրային համակարգը ունի բնիկ տեղական ծագում և սերում է Հայաստանի նախնադարյան ժայռապատկերներից այն բաղկացած է շուրջ 300 նշաններից որոնք գրվել են աջից ձախ առանց բառ անջատման: Մեզ են հասել ավելի քան 1500 մեհենագրային արձանագրություններ: Վերծանության առաջին արդյունքների հիման վրա ենթադրվում է, որ մեհենագրային համակարգի լեզուն եղել է հնագույն հայերենը:

Թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրությունը Ք.ա 9-րդ դարում ընդօրինակվել է Ասորեստանից: Ընդ որում՝ փոխ են առնվել ոչ միայն բոլոր նշանները այլև վերցվածն էլ պարզեցվել է: Մեզ հասած հնագույն արձանագրությունները թվագրվում են Ք.ա 9-րդ դարի 30-ական թվականներով և պատկանում են Սարդուրի 1-ի կառավարման ժամանակահատվածին: Դրանք կազմված են ասուրերենով: Սակայն արդեն հաջորդ թագավորը՝ Իշպուինին, և նրա ժառանգներն իրենց վիմագիր հաղորդումները կատարում էին տեղական լեզվով: Առանձին սեպագիր նշաններով արտահայտվել են ձայնավորները, երկձայն և եռաձայն վանկերը: Գաղափարագրերն արտահայտել են ամբողջական բառեր ու հասկացություններ: Վանի թագավորության սեպահիր դպրությունը ճշտորեն չի հաղորթել տեղական լեզվի հնչունային համակարգը, ուստի դժվար է որոշել թե ինչպես են արտասանվել սեպագիր արձանագրություններում վկայված բառեր: Հայտնի են բառապաշարային բնույթի բազմաթիվ ընդհանրություններ և նույնությունները արդի հայերենի հետ՝ Տուշպա-Տոսպ, Ծուփա-Ծոփք, Ջաբախա-Ջավախք: [11,46] Ժամանակակից հայերենում պահպանվել են բազմաթիվ ուրարտական արմատներ: Օրինակ՝ուր.ծուե-հայերեն.ծով,ուր.շուրի-հայերեն.սուր և այլն:

Հայկական ցեղերի և ուրարտացիների կողք-կողքի գոյակցությունը և ապա ուրարտացիների միաձուլումը կազմավորվող ժողովրդին, հանգեցրել է ուրարտերեն լեզվի տարրերի ներթափանցմանը հայոց լեզվի մեջ,ինչպես նաև ընդհակառակը՝հայոց լեզվի տարրերի ներթափանցմանը ուրարտերենի մեջ:

Այսպիսով,ժողովռդի պատմական հիշողությունը,հոգևոր արժեքները վիթխարի դեր են խաղում հայերի ազգային ինքնագիտակցության և ազգային ոգու պահպանման ու զարգացման գործում:Մշակույթի էթնոպաշտպանման գործառույթը իրականացվում է այն դեպքում,երբ այդ մշակույթը պահպանվում և վերարտադրվում է յուրաքանչյուր նոր սերնդի ջանքերով:Եթե ազգը կորցնում է իր մշակույթը,ապա դրանով իսկ զրկվում է շրջապատող միջավայրին հարմարվելու, դիմակայելու իր փորձից:Պատմական պայմանների փոփոխման դեպքում ազգը պետք է իր մշակույթի մեջ նորամուծություններ կատարի,հանմապատասխանեցնի այն ժամանակի պահանջներին:

Եզրակացություն

Այսպիսով, այս հետազոտական աշխատանքը շոշափում է այնպիսի թեմա ,որը մեծ նշանակություն ունի և արդիական է մեր ժողովրդի համար : Խոսքը գնում էազգային արժեհամակարգի ձևավորման մասին Վանի թագավորության մշակույթը ենթաթեման անցնելու ժամանակ:Արժեհամակարգի ձևավորմանհամար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները,հատկապես պատմություն առարկան:Աշակերտները Վանի թագավորության մշակույթը անցնելիս ծանոթանում են Վանի համահայկական պետության հարուստ մշակութային ժառանգությանը՝քաղաքաշինությանը,ճարտարապետությանը,քանդակագործության ը,կավագործությանը,ոսկերչությանը,հավատալիքներին:Այս մշակութային ժառանգության կրողները հանդիսանում ենք մենք՝հայերս,որը հանդիսանում է նաև համաշխարհային մշակույթի մի մաս:
Մենք պետք է տեր կանգնենք մեր մշակութային ժառանգությանը և կարողանանք այն պահպանելորպես հայոց ազգայինև համամարդկայինարժեհամակարգըկրող պատասխանատու անձ ու քաղաքացի:Եվ այսօր ազգային արժեհամակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և պետք է լինի յուրաքանչյուր մանկավարժի ուշադրության կենտրոնում : Նշենք նաև ,որ Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա-Վանը և Արգիշտիխինիլի -Արմավիրը դարձան Հայաստանի առաջին մայրաքաղաքները,հայ ժողովրդի քաղաքական,տնտեսական և մշակութային կյանքի կերտրոնները:

Այսպիսով, աշակերտը պատմության դասերին գաղափար է ստանում հայ մշակույթի,քաղաքակրթության նրա առաջացմանև զարգացման օրինաչափությունների առանձնահատկությունների մասին:Իսկ ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին,ժողովրդի հանճարովստեղծված պատմամշակութային կոթողներին կձևավորի ազգային և համամարդկային մշակույթի ժառանգորդի ,պահպանողի և հարստացնողի,կվեհացնի սովորողի ոգին,սեր կառաջացնի գեղեցիկի նկատմամբ,կօգնի գեղեցիկը տեսնելուն,զգալուն և վերապրելուն,կսովորեցնի կապվել իր նախնիների գեղագիտական և ստեղծագործական ավանդներին :

Գրականության ցանկ

1.Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, 176 էջ

2. file:///C:/Users/Asus/Downloads/HAJOCPATMUTUN_CHAPOR_CRAGIR%20(1).pdf

3. Հայ Ժողովրդի Պատմություն, Հ. 1. Երևան 1971, 958 էջ

4.https://hy.wikiquote.org/wiki/%D4%B7%D6%80%D5%A5%D5%A2%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB

5.https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80

6.https://www.wikiwand.com/hy/%D5%84._%D5%A9._%D5%A1._9-7-%D6%80%D5%A4_%D5%A4%D5%A1%D6%80%D5%A5%D6%80%D5%AB_%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D5%A5%D6%80%D5%BA%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF

7.https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BD%D6%89_%D4%B7%D6%80%D5%A5%D5%A2%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB_%D5%A9%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6

8. Пиотровский Б.Б. Ванское царство (Урарту) / Орбели И.А.. — Москва: Издательство Восточной литературы, 1959. 286 с.

9.https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%A9%D5%A1%D5%A3%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%B8%D5%B6%D5%A8

10.https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%A9%D5%A1%D5%A3%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

11. Ռաֆայել Իշխանյան, Պատկերազարդ պատմություն հայոց. Երևան, 1990, 160 էջ